



Լուիկի, տաքդեղի և բաղրիջանի սորտերի մշակություն

/ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ/

«Գյուղատնտեսության աջակցության հանրային կենտրոն» ֆԲԸ
E-mail: asrc_agroscience@mail.ru
Հեռ: (37410) 23 03 80 Ֆաքս: (37410) 23 03 80

Ներածություն

Բարձր բերքատու մշակաբույսերի արտադրության և սպառողի պահանջները բավարարող սորտերի, ինչպես նաև էկոլոգիապես մաքուր բերքի ստացման համար, օրգանական գյուղատնտեսության պահանջներին բնորոշ նոր պատրաստուկների կիրառումը կնպաստի բարձրորակ արտադրանքի ստացմանը: Այս պահանջներից ելնելով, տրվել է ներդրվող սորտերի գնահատականն ըստ հասունացման ժամկետների, բերքատվության, պտուղների փոխադրունակության, վերամշակման համար պիտանելիության, որակական ցուցանիշների դիմացկունության հիվանդությունների և վնասատուների նկատմամբ: Դրանցից լավագույնը առաջարկվել է հետագա կիրառման համար:

Տեխնոլոգիայի նկարագրությունը

Սերմերը ենթարկվել են թերմիկ ախտահանման՝ 55-60°C-ի տակ ջրային բաղնիքում:

Ցանքը կատարվել է ջերմոցում, բուսահողով, տորֆով և կենսահումուսով լցված խոռչիկներում՝ 2 :2 :1 հարաբերությամբ: Սածիլների մշակության ընթացքում կատարվել է 2 սնուցում կենսահումուսով, 2 քաղիաննոսրացում:

Հողատարածքը վարվել, հարթեցվել և տեղագծվել է: Սածիլումը կատարվել է սածիլների 45 օրական հասակում: Տնկման սխեման երկկողմանի ժապավենաձև է՝ /90+70/x20սմ /լուիկ,տաքդեղ/ և /90+70/x30սմ /բաղրիջան/:

Վեետացիայի ընթացքում դաշտը ոռոգվել է 15 անգամ:

Հողատարածությունում կենսահումուսը տրվել է սնուցման ձևով՝ 3 անգամ՝

- սածիլումից 15օր հետո բույսերի աճման շրջանում
- առաջին սնուցումից 20 օր հետո բույսերի կոկոնակալման շրջանում
- երկրորդ սնուցումից 20 օր հետո

Առաջին և երկրորդ սնուցումները կարևորագրումիջոցառում են. աճման շրջանում հնա-

րավորություն է ստեղծվում արագորեն կազմակերպել փարթամ տերևներ: Երրորդ ժամկետի սնուցումը հնարավորություն է տալիս ստանալու նուրբ փայլուն պտղամաշկով, մուգ կարմիր ապրանքային պտուղներով բարձր բերք:

Վեգետացիայի ընթացքում 1 անգամ կատարվել է կանխարգելիչ պայքարի միջոցառում: Վիրուսակիր վնասատուների և բաղրիջանի կոլորադայան բզեզի դեմ երկու անգամ օգտագործվել է նոր պատրաստուկ՝ կծու տաքդեղի. սխտորի և հազարատերևուկի 1 :1 :1 պատրաստված լուծույթ: Հողամասում երկու անգամ կատարվել է կուլտիվացիա, մեկ անգամ ակոսահանում, երեք անգամ քաղիան -փխրեցում:

Բերքահավաքը կատարվել է պարբերաբար՝ յոթ օրը մեկ:

Արդյունքները

Լուիկի, տաքդեղի և բաղրիջանի մշակությունը իրականացվել է Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի հողատարածքում /Արարատի մարզ, Դարակերտ ավան/:

Պարզվել է, որ ներդրված սորտերը համապատասխանում են օրգանական մշակման առաջարկված տեխնոլոգիային և պահպանում են իրենց սորտային առանձնահատկությունները: Հետազոտված սորտերից առանձնացել են.

❖ վաղահասությամբ՝ լուիկի Լիա, տաքդեղի՝ Հայկ, բաղրիջանի՝ Իշխան սորտերը;


❖ բարձր բերքատվությամբ՝ լուիկի Լիա, տաքդեղի Հայկ, բաղրիջանի՝ Իշխան սորտերը, որոնց բերքատվությունը համապատասխանաբար կազմել է՝ 925.5, 510.7, 740.4 գ/հա:

Բոլոր սորտերն էլ ցուցաբերել են որակական բարձր հատկանիշներ: Ինչպես նաև աչքի են ընկել պտուղների փոխադրունակությամբ, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկունությամբ:



Նվեր

Լիա



Իշխան

Ավանդ



Հայկ

Պոմիդորի, տարբրեղի և բաղրիջանի բույսերը

Սորտերի նկարագրությունը

Բաղրիջան

Ավանդ - միջավաղահաս է, զանգվածային ծլումից մինչև պտուղների տեխնիկական հասունացումը տևում է 115 օր: Թփի բարձրությունը 98,7 սմ է, կանաչ գույնի, առանց փշերի: Միջին բերքատվությունը՝ 50տ/հա: Պտուղներն ունեն համային բարձր ցուցանիշներ, առանց դառնության: Պտուղների գույնը տեխնիկական հասունացման շրջանում մուգ մանուշակագույն է: Պտղամիսը սպիտակ: Պտղի ձևը երկարավուն գլանաձև է, սրածայր: Պտղի միջին երկարությունը 30.0սմ է, միջին զանգվածը՝ 210գ : Դիմացկուն է սնկային, բակտերիալ հիվանդությունների նկատմամբ :

Իշխան- միջավաղահաս է, զանգվածային ծլումից մինչև պտուղների տեխնիկական հասունացումը տևում է 110 օր: Թփի բարձրությունը 115.5 սմ է, կանաչ գույնի, առանց փշերի: Միջին բերքատվությունը՝ 70տ/հա: Պտուղները համային բարձր ցուցանիշներ ունեն, առանց դառնության: Պտուղների գույնը տեխնիկական հասունացման շրջանում սև է, պտղամիսը սպիտակ: Պտղի ձևը երկարավուն գլանաձև է, սրածայր: Պտղի միջին երկարությունը 40.0սմ է, միջին զանգվածը՝ 280գր:

Դիմացկուն է սնկային, բակտերիալ հիվանդությունների նկատմամբ:

Կարդեղ

Նուշ-55 - կոնաձև, 90-110գ պտուղներով, բարձր համային հատկանիշներով տեղական սորտ է, 40տ/հա բերքատվությամբ: Համեմատաբար դիմացկուն է հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:

Հայկ- կոնաձև, խոշոր պտուղներով, վիտամինների բարձր պարունակությամբ, 50տ/հա բերքատվությամբ սորտ է: Համեմատաբար դիմացկուն է հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:

Պոմիդոր

Լիա-միջահաս սորտ է: Բերքատվությունը 850գ/հա: Պտուղները փոխադրունակ, ամուր, մուգ կարմիր գույնի, 150-170գ զանգվածով: Օգտագործվում է թարմ և վերամշակված վիճակում: Համեմատաբար դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ:

Նվեր-միջահաս է: Բույսերը դեռերմինանտ են, միջին աճեցողությամբ: Պտուղները կլոր են, վառ կարմիր գույնի, ամուր, փոխադրունակ, 120-180գ զանգվածով: Բերքատվությունը 80տ/հա: Օգտագործվում է թարմ և վերամշակված վիճակում: Համեմատաբար դիմացկուն է հիվանդությունների նկատմամբ:

Տեխնոլոգիայի կիրառման վայրը

Կեխնոլոգիան կիրառելի է Արարատյան դաշտավայրում, ինչպես նաև հանրա-պետության նախալեռնային, լեռնաանտառային գոտու ցածրադիր ջրովի պայմաններում :

Օգտագործված գրականություն

- 1.«Օրգանական գյուղատնտեսությունը հեռանկարային ուղղություն : - «Շեն կազմակերպություն, Երևան 2006
- 2.Սառիկյան Կ.-Բաղրիջանի սելեկցիայի արդյունքները Հայաստանում, Միջազգային գիտաժողովի նյութեր, ԲԲԼՏՄԳԿ Երևան 2006
- 4.Զուրաբյան Վ. Ղազարյան Ա.- Պոմիդորի նոր սորտ Նվեր, տեղեկատվական թերթիկ, Երևան 1984,

* * *

Տեղեկությունների համար դիմել.

-Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն, Խորհրդատուներ՝ Կ.Սառիկյան, Գ. Մարտիրոսյան
 հեռ. /0236/4-08-92 /ծ/, քջջ./093/41-23-54, /093/43-20-26

-ԳԱՀԿ, Ինովացիայի և ուսուցման բաժին
 - Արարատի ԳԱՄԿ, հեռ. /0238/4-10-84

Տպագրվել է Գյուղական Չեռնարկությունների և Փոքրածավալ Առևտրային Գյուղատնտեսության Զարգացման Ծրագրի շրջանակներում՝ ԳԱՀԿ տպարանում, պատվերի թիվ 11, տպարանակ 890